ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

1. Նպատակը

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը և Եվրահինտեգրման գործընթացը նոր պահանջներ են ներկայացնում մասնավոր հատվածի և մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման ուղղությամբ: Մասնավորապես անհրաժեշտություն է առաջացել վերանայել և հստակեցնել Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման գործող չափորոշիչները, ինչը հնարավորություն կտա Հայաստանում ՓՄՁ պետական աջակցության առավել նպատակային իրականացման, ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցման ու կատարելագործման, ինչպես նաև Եվրամիության չափանիշներին մոտեցման և ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների համադրելիության ապահովման համար:

1.1 Ներկա իրավիճակը և առկա խնդիրները

Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչներն ամրագրված են 2000թ. ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը հիմնված է միայն աշխատողների թվաքանակի վրա: Նման չափորոշիչների կիրառումը բխել է այն ժամանակ ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերի և բնագավառների զարգացման մակարդակից և ընդհանուր առմամբ երկրում ձևավորված տնտեսական իրավիճակից:

Ընդհանուր առմամբ «Փոքր բիզնես» “small business” տերմինը տարածում է ստացել միայն անգլիախոս երկրներում: Մնացած արևմտաեվրոպական երկրներում և Ճապոնիայում ավելի հաճախ օգտագործում են «փոքր և միջին ձեռնարկություններ» “Small and Medium Enterprises”, իսկ Հնդկաստանում և մի շարք ասիական երկրներում «Փոքր չափի արդյունաբերություն» “Small Scale Industry” տերմինները, որոնք ըստ էության ունեն միևնույն նշանակությունը: Վերոհիշյալ տերմինները տարբեր երկրներում սահմանվում են տարբեր չափորոշիչներով, այսպես օրինակ ԱՄՆ-ում, Գերմանիայում ՓՄՁ-ներում աշխատողների առավելագույն թիվն է ոչ ավել քան 500, Ճապոնիայում՝ 300, Ֆրանսիայում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, Դանիայում, Լեհաստանում և Հունաստանում արդեն իսկ կիրառվում են 2005թ. հունվարի 1-ի դրությամբ ուժի մեջ մտած Եվրամիության չափորոշիչները՝ որի համաձայն փոքր և միջին ձեռնարկություններին վերագրում են այն կազմակերպությունները, որոնցում աշխատողների թիվը մինչև 250 մարդ է: Աշխատողների թվաքանակի հետ մեկտեղ նշված գրեթե բոլոր երկրներում կիրառվում են նաև լրացուցիչ չափորոշիչներ, ինչպես օրինակ տարեկան շրջանառությունը, հիմնական միջոցների մեծությունը, ակտիվների հաշվեկշռային արժեքը: Այսպես, օրինակ տարեկան շրջանառության ցուցանիշը

Ռուսաստանի Դաշնությունում սահմանվում է մինչև 27.34 մլն եվրո, Գերմանիայում՝ 50 մլն եվրո: ԱՄՆ-ում ՓՄՁ սուբյեկտների տարեկան շրջանառության առավելագույն շեմը սահմանվում է ըստ առանձին ոլորտների՝ առևտրի և ծառայությունների ոլորտի համար սահմանվելով մինչև 6.5 մլն ԱՄՆ դոլար, արտադրության ոլորտում՝ 31 մլն ԱՄՆ դոլար: Սինգապուրում, որպես ՓՄՁ լրացուցիչ չափորոշիչ կիրառվում է ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ սահմանվելով մինչև 15 մլն ԱՄՆ դոլար:

Եվրամիության չափորոշիչների համաձայն ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են երեք խմբի՝

- գերփոքր (միկրո),
- փոքր,
- միջին:



Դասակարգումը կատարվում է հիմք ընդունելով ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատողների թվաքանակը, տարեկան շրջանառությունը կամ ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Եվրամիության կողմից ընդունված ՓՄՁ չափորոշիչները

Համաձայն Եվրամիության չափորոշիչների ՓՄՁ սուբյեկտներ են համարվում այն կազմակերպությունները, որոնց աշխատողների թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, տարեկան շրջանառությունը չի գերազանցում 50 մլն եվրոն կամ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 43 մլն եվրոն: Ըստ առանձին կատեգորիաների ներկայացված է գծապատկերում:

Տնտեսավարող սուբյեկտներ	Աշխատակիցների թվաքանակ (մարդ)	Տարեկան շրջանառությունը (մլն եվրո)	կամ	Ակտիվների հաշվեկշռային արժեքը (մլն եվրո)
ՄԻՋԻՆ	< 250	≤ 50	կամ	≤ 43
ՓՈՔՐ	< 50	≤ 10	կամ	≤ 10
ԳԵՐՓՈՔՐ	< 10	≤ 2	կամ	≤ 2

Հարկ է նշել, որ Եվրամիության չափորոշիչներ կիրառող գրեթե բոլոր երկրները հնարավորություն ունեն իրականացնելու համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչն ակնհայտորեն ստեղծում է տարբեր երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր՝ երկրի տնտեսության մեջ ՓՄՁ ոլորտի տեղի ու դերի գնահատման առումով: Նման չափորոշիչներ կիրառող երկրներում, ՓՄՁ սուբյեկտների առավել հստակ տարանջատման շնորհիվ, հնարավորություն է ընձեռվում գերփոքր, փոքր և

միջին ձեռնարկությունների համար կիրառել համեմատաբար մեղմ հարկման ռեժիմ, իրականացնել առավել հասցեական պետական աջակցության միջոցառումներ և այլն:

Հայաստանի Հանրապետությունն այսօր կանգնած է Եվրամիության հետ համագործակցության մեխանիզմների մշակման, համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու անհրաժեշտության խնդրի առջև: Եվրամիության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված «Գործընկերության և համագործակցության համաձայնագրի» հիմնական նպատակներից մեկը օրենսդրական և տնտեսական համագործակցության հաստատումն է: Հայտնի է, որ Եվրոպական տնտեսական ինտեգրացման հիմնական նախապայմաններից մեկը հավակնող երկրների օրենսդրությունների համապատասխանեցումն է Եվրամիության օրենսդրությանը: Այս առումով հատկապես կարևորվում է տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենսդրության բարեփոխումը, մասնավորապես ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների համապատասխանեցումը Եվրամիության կողմից ամրագրված դրույթներին:

1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկվում է կատարել համապատասխան փոփոխություններ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի կկիրառվեն ՓՄՁ սուբյեկտների նոր չափորոշիչներ: Մասնավորապես կփոփոխվի գերփոքր, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտների աշխատողների թվաքանակի գործող սահմանումը և կկիրառվեն լրացուցիչ չափորոշիչներ՝ չտարանջատելով ՓՄՁ սուբյեկտներին ըստ տնտեսական գործունեության ոլորտների:

2. Կարգավորման առարկան

ՓՄՁ սուբյեկտներն ըստ նոր մոտեցման կդասակարգվեն ըստ աշխատողների թվաքանակի և ըստ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթի կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքի:

Համաձայն առաջարկվող փոփոխությունների գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար աշխատողների թվաքանակը սահմանվում է համապատասխանաբար մինչև 10 մարդ, մինչև 50 մարդ և մինչև 250 մարդ, նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը մինչև՝ համապատասխանաբար 100 մլն դրամ, 500 մլն դրամ և 1500 մլն դրամ, կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը մինչև՝ համապատասխանաբար 100 մլն դրամ, 500 մլն դրամ և 1000 մլն դրամ:

ՓՄՁ սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակ (մարդ)	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը (մլն դրամ)		Նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը (մլն դրամ)
Գերփոքր	մինչև 10	չի գերազանցում 100	կամ	չի գերազանցում 100
			կամ	
			կամ	

Փոքր	մինչև 50	չի գերազանցում 500	չի գերազանցում 500
Միջին	մինչև 250	չի գերազանցում 1500	չի գերազանցում 1000

ՓՄՁ սուբյեկտների նոր չափորոշիչների մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված 2005-2007թթ. համար համապատասխան միջինացված ցուցանիշները, որոնք տարանջատված են 3 խմբերի՝ կազմակերպություններում աշխատողների թվաքանակի առաջարկվող չափորոշիչներին համապատասան: Նշված ցուցանիշների գծապատկերային արտացոլումը ներկայացված է ստորև:



Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթի և նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքի շեմը սահմանելիս հաշվի են առնվել գծապատկերում ներկայացված ցուցանիշների աճի դինամիկան, ինչպես նաև մի շարք լրացուցիչ գործոններ, որոնք մոտակա տարիներին որոշիչ ազդեցություն կարող են ունենալ կազմակերությունների ստացած հասույթի և հաշվեկշռային արժեքի ցուցանիշների աճի վրա: Մասնավորապես, որպես առաջարկվող ցուցանիշների ինտենսիվ աճի գործոն են դիտարկվել տնտեսական աճը և գնաճը, ինչպես նաև հարկային օրենսդրությունում տեղի ունեցած փոփոխությունները և վարչական ընթացակարգերի խստացումները, որոնք ուղղված են կազմակերությունների մոտ իրացման և ակտիվների իրական ծավալների բացահայտմանը: Նշված գործոնների հարաբերական վերլուծության արդյունքում աճի յուրաքանչյուր գործոնի համար սահմանվել են պրոգրեսիվ գործակիցներ ինչպես նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթի, այնպես էլ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքի ցուցանիշների համար: Նշված ցուցանիշների ամփոփումը արտարկման պրոգրեսիվ գործակիցների մատրիցում հնարավորություն է ընձեռել մոտակա տարիների համար կանխատեսումներ կատարել նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթի և նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների

հաշվեկշռային արժեքի միջինացված ցուցանիշների համար, որոնք ներկայացված են ստորև ներկայացված գծապատկերներում:



3. <u>Ակնկալվող արդյունքները</u>

Առաջարկվող փոփոխությունները կնպաստեն Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների հստակեցմանն ու միասնականացմանը, հնարավորություն կտան դրանք մոտեցնել Եվրամիության չափորոշիչներին, ինչն ակնհայտորեն ինչպես կնպաստի ՓՄՁ ոլորտի աջակցությանն ուղղված ծրագրերի (միջոցառումների) հետևողականության, թափանցիկության և հասցեականության ապահովմանը, այնպես էլ հնարավորություն կտա իրականացնել տարբերակված աջակցության ծրագրեր՝ ըստ տնտեսավարող սուբյեկտների տեսակների: «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների վերոնշյալ փոփոխությունը հնարավորություն կտա Եվրամիության շրջանակներում իրականացվող ՓՄՁ աջակցության ծրագրային նախաձեռնությունները հասանելի դարձնել նաև Հայաստանում գործող ՓՄՁ սուբյեկտների համար, ինչպես նաև կնպաստի ՓՄՁ ոլորտին առնչվող հարցերում Եվրամիության հետ համագործակցության արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, առաջարկվող փոփոխությունները կնպաստեն Հայաստանում ՓՄՁ առընչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցմանն ու կատարելագործմանը՝ որպես չափորոշիչ կիրառելով աշխատողների թվաքանակը:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել հետևյալ իրավական ակտերը.

1. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության

միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N40-Ն որոշում: